ԱՐԵՎԱՆ

7՝ ՏԱՐԻ — ՀԱՆԴԻՍ — 4 ՅՈՒՆԻՍ

Թ. 202 — ՇԱԲԹԱԿԱՆ — 1863

Ինչ որ խմբագրութեան և Տնօրէնութեան կը վերաբերի պէտք է ուղղել առ ԱՐՕՀԱՄ Դ ՄՈՒՐԱՏԵԱՆ։ Մեծ Նոր—խանի վերի գաւառ, թիւ 2, ՄԵՆԱՒԻ գրատեղեակը։ — Ընդհատ նամակ կամ ծանր կը մերժուի։

Օրագիրը ամեն շաբաթ երեքշաբթի օրերը կը հրատարակուի։

Գնին տարեկան 120 զուռուշ արծաթ, — վեցամսեայ 70, — եռամսեայ 40, — մէկ թիւը 4 զուռուշ, գաւառ իրեւտած Օրագրոց ձամբու ծախքը ընդունողին վրայ է։ — Ծանուցման տողը 1 զուռուշ։

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆՔ ԿԸՆԴՈՒՆՈՂԻՆ

Ի ՊՕԼԻՍ Օրագրոյս գրատեղեակը, Մեծ—Նոր—խանի վերի գաւառը թիւ 2։

ՋՄԵՌՈՒՏԻՒՆ Տէրոց Ընտիրեան եղբարց վաճառատունը և ՆԱՂԱԿ Հանդէսին գրատեղեակը։ — ՏՐԱԳԻԶՈՆ՝ խաչատուր ազա Էրմանեանի գրատեղեակը։ ԹԵՒԻՐՏԱ Յարութիւն ազա Պ. Ճամճեան։ ՆԻԿՈՄԻԴԻԱ Պ. Համի Յակոբ Նալպանդեան

ՀԱՆԴԻՍ

ՏԱՐԵԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԸՆՕՐՀԱՒԱՏ ՈՒԹԻԱՆ ԱՒԾ ԲԱՐԵԳՈՒԹ ԽՆԴՐԱԳԻՐ

ԿԱՅՍՐՆ ՄԵՐ

ՍՈՒԹԱՆ ԱՊՏԻՒԼ ԷՖԷՆԴԻ

Ի ՊԷՏՔՕՕՋ

Հարիւրաւոր տարիներէ հետէ մահմետ ի մահմետ խափանող և խարխափող Հայկեան խեղճ ու տրտում Տունը օտար երկինքի տակ դէմ հրեն վիճակաւորութիւն պարգեւող կանոնագիրը բռնութիւն մը ունեցաւ Օսմանեան հզօր կայսեր ընորհիւ, զորմէ իր սրտին անձուկ ընդհակառակութիւնը հրապարակաւ յայտնելու համար մասնաւոր անօրէն ժողովի մը ձեռամբ օր առաջ ամեն անօրինութիւն և կարգադրութիւն եղած ըլլալով Մայիս 26 կիրակի առաւօտ ամէն թաղերու նահամատոյցները շոգենաւներ հանդիսելով ամէն Սահմանադրաբեր անձինքը առաւ և երեւելի հանդէսով Պէյօղլի նահամատոյցը փոխադրեց։ Ասկից Հայ բազմութիւնը խումբ առ խումբ ուրախութեան ժպիտով Եկեղեցին դիմեցին, ուր հանդերձեալ էր Ըժ. Ներսէս եպիսկոպոս պատարագ մատուցանել, զոր մասնաւորապէս հանդիսականաց համար քիչ մը ուշ թողած էին։

Գիւղից եկեղեցին շատ փոքր, և այն բնակութիւ հանդիսականները (որ գոնէ 8 կամ 10 հազարի չափ կային) պարունակելու անբաւական ըլլալով՝ եկեղեցւոյն բակային փողոցը շատ վայելուչ կերպով զարդարեր էին։ Փողոցին բեռնակ հայկական կամար մը կանգներ էին, և պատուհ[illegible] ԱՊՏ ԻՒԼ ԱԶԻԶ գրուած էր. և անկէ մինչև եկեղեցւոյն առջևի բարձրաբերձ ծառերուն քով կանանչեղէն գաւիթներ կամարներ շինած էին փողոցին երկու կողմը, և մէջ տեղ գեղանի երեսն ալ կանանչեղէններով գեղեցիկ մարգագետին մը ձևացուցեր էին։ Խաղ մութիւնը այն հայկական կամարին տակէն անցնելով կը յառաջանար դէպ ի այն բարձրաբերձ ծառերը, ուր Ներսէս եպիսկոպոս ծանր զգեստներով զգեստաւորեալ գրեթէ մէկ ժամու չափ աղօթք և աղաչանք քարոզ մը տուաւ։ Ներսէս եպիսկոպոսին գլուխն վրայօք ծառին վրայ ծաղկաշէն գրերով կԵՑՑՒ ԱԶԳ ԵՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ գրուած էր։

Ետքը առ ժամայնելի և ուրախութիւ ատարանները և հոն ներկայ եղող Հայորեցւոց դէմքին վրայի ժպիտը Հայ սրտին Սահմանադրական վախքը կը պատկերացուցնէին ամենուն աչքին առջևն։

Յետ աւարտման ժամերգութեան՝ Պատրիարքական փոխանորդ Ըժ. Պետրոս վարդապետ և ամեն եկեղեցեայց քարոզիչ վարդապետները և մէկ քանի քահանաներ հանդիսականաց բազմութեան հետ ընկերա-

յած, առջևէն նուագածուպ խումբը Ազգային երգերը նուագելով և բազմութեան մէջտեղէն սպիտակափայլ միաձև հանդերձներ հագած, և գլուխնին ծաղկեայ սպիտակ պսակներ դրած՝ խումբ մը փոքրիկ Հայուհիներ զոյգ զոյգ, թև թևի տուած Ազգային երգերը երգելով՝ մինչև Ի–նչեաթ Իսկէնթի կոչուած ծառերով հովանաւորեալ ղօսանալայրը հասան, ուր հայակառ և գեղեցկուհին համար մը կառուցուած ըլլալով՝ անոր առջևէն անցնելով իւրաքանչիւր ոք իւր պատշաճ տեղը գնաց նստաւ, և Պատրիարքական վեհանդուրգին համար ալ յատուկ հբեղ վրան մը կանգնուած էր, ուր ինք ու միւս վարդապետները բազմեցան։ Նոյն օրը պատահմամբ Ի–տալացիք ալ նոյն գեղազարդ դաշտին մէջ գտնուելնան, իրենց ազգային Սահմանագրութեան երրորդ Տարեդարձը տօնելու . . . ։

Ահա այսպէս այն օրը նոյն կանաչագեղ դաշտին վրայ գտնուեցան երկու իրարու թէ և անծանօթ մարմիններ՝ այսինքն Հայք և Իտալացիք նմանօրինակ Տարեդարձի մը հանդէսը կատարելու ։ Հոն նոյն օրը երկու տարբեր դրօշակներ կը ծածանէին ինչպէս ուխտութեան . . . ։ Հոն Հայկեան Թռչունը գոգցես միասիրտ և միահոգի ցնծութեան և ուրախութեան տօնակատարութիւն մը կը կատարէին։ Հոն գոգցես կիրքն ու առնութիւնը, բռնութիւնն ու Ազնուութիւնը Հայկեան Թռչուններուն սրտերէն հեռացած էին, և հոն կը տեսնուեր թէ Հայք ղիրայ կը ձանչնան և ղիրայ կը սիրեն։

Այ ղօսանալայրին մէկ կողմը Տնօրէն ժողովին հոգատարութեամբը 400 հոգւոյ մէկտեղ ճաշելու բաւական վայելուչ կերպով երկար սեղաններ պատրաստուած էին։ Կրնայ ըսուիլ որ՝ հեռու և բացօդեայ սեղի մը համար թէ սեղաններուն վայելուչ պատրաստութիւնը և թէ կերակուրները չափէն աւելի աղեկ էին. բայց և այնպէս մէկ քանի թերութիւններ սեղի ունենալն ալ կրնար յուսացուիլ . . . . . ։ Ինչ և իցէ՝ այսպիսի ծանր աշխատութեանց վախարէն պարտաւոր ենք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Տնօրէն ժողովոյ Ազգ. անդամներուն։ Այս սեղանները չորս անգամ պարպուեցան ու նոյնքան լեցուեցան տոմսակատար հրաւիրեալներով։

Յետ ճաշին՝ Հայկեան Թռչունները խումբ խումբ Տաճկական դրօշակներն ու նուագածուպ խումբն առջևնին ձգելով սկսան Ազգային պատշաճ երգեր երգելով նոյնպէս նաւու և կանաչագեղ դաշտին վրայ ձեմելու երբեմնակի կեցցէներու աղաղակներով օդը թնդացնելով։

Այս միջոցին Իտալիոյ Վսեմ. Դեսպան Պէլլա Պատրաչիօլա Սարգիսը պատուաւոր Իտալացիներով մեհեակ Իտալական դրօշակով Հայոց հաքեզ վրանը այցելութիւն ընելու համեցաւ. ուր սիրալիր ընդունելութիւն գտնելով իր սրտին գոհունակութիւնը յայտնեց, ու քիչ մը խօսակցելէն վերջը գնաց իւր վրանը։ Յետոյ Ներսէս Ա.ժ. Կաթողիկոսն ալ Հոյ և Հռոմէական կղերականաց հետ Նորին Վսեմութեան այցելութիւն մը ըրաւ ի պատիւ Իտալական հանդիսին։

Շատ սիրելի էր մեզի տեսնել հոն Ինձնուէր ընկերութեան անդամ եղող Սիրոյն պատգուխտ Հոյոց ներկայացուցած սիրալիր տեսարանը։ Ասոնք՝ միաբերան Ազգային երգեր երգելէն յետոյ, մասնաւոր տեղ մը հաւքըելով, մէկերնէն մէկ քանին համառօտ, բայց խիստ սրտաշարժ ճառեր կարդացին Հայաստանի Թշուառ վիճակին վրայով։

Սոնգմէ հաքը Անձարպ Օգսէն եփէնտին մասնաւոր կերպով շնորհած բաժակաճառը մի վրայ եղելով հնարաւոր, բայց ոգեւորիչ Տաճկերէն ճառ մը խօսեցաւ, որ բուռն ծափահարութեամբ ընդունուեցաւ ունկնդիրներէն։ Յետոյ Մեղսաբեան Երդ. Պ. Ներսէսը ճառ մը կարդաց, և ապա Երդ. Պ. Սիմոն Ալեքսիրճեանը ճառ մը խօսեցաւ. բայց կը ցաւինք ըսելու՝ հանդիսականց ուշադրութեան յարատևութիւնը ընդմիջեցաւ բաժակաճառներուն փլչելովը . . . ։ Օրինակ տալ ժամանակ ըլլալով հանդիսականները խումբ խումբ շրջեցանները մնալով Ազգային երգեր երգելով վերադարձան իրենց Թաղերը։

Նոյն իրիկունը իւրաքանչիւր Թաղի մէջ մասնաւոր հանդէսներ եղաւ ուրախալի եղանակով մը կերպով, որ գրեթէ մինչև կէս գիշերի մօտ չարունակեց Ազգային երգերով և ճառեր կարդացուելով։

Ի վերջոյ չմոռնանք մեր սրտին խորին շնորհակալութիւնը հրապարակաւ մատուցանելու երաժշտութեան գասատու Երդ. Պ. Նիկողոս Թաշճեանի, որ Տարեդարձի երգերուն թէ ձայնագիրը պատրաստելու, և թէ պատուաւոր Հայութեան ծանր աշխատութեանը սիրով և ազգասիրաբար յանձնուելու եղաւ մասնաւորապես գիշեր և ցորեկ մէկ Թաղէն միւսը երթևեկելով։ . . ։

Ահա այս կերպով այս սիրաշարժ հանդեսը առանց ինձմի և կռուոյ վերջացաւ ի պա-

ութ Հայկեան ամրոց, այսու հետեւ կը մնայ Սահմանադրութեան գործադրութեանը նա-յիլ. . . .

Հափշտակուած Սահմանադրութիւն մը պարիտը։

Ընդամէնը 24ին ուրբաթ առաւօտ Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին գանդիկեցաւ. Տէր ողորմեայն առաջ սեղանն աւարտելէ յետոյ Տէր Յովհաննէսը եկաւ ծա-նուցում մ՚ընել սա պէս։

«Յաւուրս օրհնեցէք զձեզ Ընկեր-մահալ-լէի ժամուն լաւարար Աշէկի Պետրոսը Օտ-ման Թիւրքիոյն Դաւռը բանտարկուած է քանի մը օրե ի վեր՝ անոր ազատութեանը համար Տէր ո-ղորմեա մը ընենք միաբերան, ... Ինկէ անդին մեկզի Թողունք հիմայ։

Անշահախնդրութիւնն հետաքրքրութիւնս առ հա-նեց. ուզեցի գիտնալ թէ այդ երիտասարդը ինչմ բանտարկուեր է. այդ երիտասարդը կը ճանչնայի ես վաղուց որ բարի մարդ և բա-րի քրիստոնեայ մըն էր. արդեօք ըսի փոխուե-ցաւ։ Ես ու ձայ քանեցի ծակ ու ծուկ չը Թողուի մնայ եղայ մեծմասին ազգս բան տարուբերութեան ճշմարիտ պատճառը հասկցայ։

Ընկեր-մահալէի եկեղեցիէն սկիհ մը գող ցըվեր է. այս գողութիւնը մի ըրաւ. եկե-ղեցիին մէջը էն խելօք մարդը ով է նէ, ան ը-նած ըլլալու է։ Այս վճիռը տրուեցէն ետքը՝ այն սեղին Թաղական խորհուրդէն երկու հոգի, խորհրդարանը ետաոած սահմանին, սիր-սեփնին նեղանալով եկան՝ սա մարդը կանչենք հարցունենք նայինք սկիհը արմ ծախեր է, ըսելով կանչել կատան։

«Օրուընէ նայինք Պետրոս եղբայր, սկի-հը քանի տարիմ եկաւ և որմե ծախեցիր։

— Ո՞նչպէս սկիհ.

— Որ է սա քու գողցած սկիհը.

— Մի ըսաւ որ ես սկիհ գողցեր եմ. ասիկ կառնէք ատի։

— Ետպէն մի գողցաւ. դուրս նայինք։

— Ներեցէք, ես ձեզի պատասխան տալու պարտական չեմ. քանի որ Սահմանադրու-թեան օրինաց ընդդիմած եք, ուստի և քանի որ մեծապէն մաս չըկայ հոս դուք այս դա-տաստանը տեսնելու կարող չէք։

— Ո՞նչ ըսել է ատ, կհոի քեզի լերը. մեր մէջը հիմ չափազ ձեռ կայ, հիմ կարօղ կար-կըտող կայ. մենք այս դատաստանը չենք կըր-նար տեսնել հա. ըսել է որ դուն ես գողցեր ըսինք նէ՝ սուտ չէ. էհ, ալ հասկըցեցաւ գործս եղ»

Դատաստանի իսմամը կը տրվի այդ չափազ ձեռազ կարազ կարկըտազ ազանեցուն կոզմէն, և հարցուփորձն ու գատաստիկը կսազ Պետ-րոսը կը ղրկըվի Պատրիարքարան։

Դոզն իր գատաստիկը առած Տեղապահ Սրբազանին կը ներկայանայ. հոն իր սեւ բազ-դէն Ընդհային առաժամանակեայ Վարչական Խոհան ժողովին մէկ գլուխ ու հանդամը կը գըտնըվի. Թաղական խորհուրդին զրկած գիրը կը բանան ու կը տեսնեն որ սկիհը գող-ցողը երեկոյ ատկը կեցած է։ Ի՞նչ ուրա-խութիւն, երկինքը վիճակած առեներին երեկոյ առկը գտեր են։ Ընչ ուրիշ խօսք մը ընել հարկ չէ. անդէն պատիժը անօրինելու էին նէ ալ՝ ընդհակ կընեն գողին հետ մէկ երկու խօսք ընելու։

«Ի՞նչպէս հասկցաձակեցար անօրէն այն առըթ սպասը գողնալուս. կսանէ պատիժդ կրնաս։

— Օտաոյ եմ Սրբազան, հասկցանք իմա-ցանք, այն տեղի Թաղական խորհուրդը քըն-նութիւն ըրեր է, գողութիւնը իմ վրաս հաստատուելու է որ դուք ալ հիմայ եղեր սա

Սահմանադրութեան դուք հոս խաւն ժողո-վին մեծագոյն մաս չըկազմելնուդ համար, կա-րող ալ չէք ոչ միայն պատիժ սահմանելու, այլև նոյն իսկ իս հարցափորձի քաշելու։

— Վայ, դուն մի կրլաս որ մեղի օրէնք կ՚ուսոյնես. մեծագոյն մաս չունինք, գործ չենք կրնար տեսնել եղեր. գնաց եղար մեղի Սահմանադրութիւն և օրէնք սորվեցնող. մենք հիմայ քեզ պատժենք ատ՝ դուն եաբը գնա Սահմանադրութիւնը ձեռքդ բողքէ մեզի դէմ։

— Դուք կրնաք իս գատապարտել, բայց Սահմանադրութիւնն ալ ձեզ կը գատապարտէ։

— Կոպսըվէ սա տեղէն. մենք հիմայ քեզի նայէ ինչ կ՚ընենք. հիմ հոս չենք պատժեր, քեզ Օսմանիկեան դուռը պիտի ղրկենք. ո-րտեղեւէ դուն մինակ գող չես, ժողովուրդն պրպտիչ ալ ես. սա նայէ, ամեն Մուշեղներն ատ են ելեր, որը Սամիկոնեան Վարդանը Մուշի մէջ չը պիտի մնայ կը պատայ (ընթեր-ցողը Մեծն Վարդանը չը հասկընան, ասի նոյն անուանով անոր հակառակ գործող մ՚է) որը Սամբուկն երթայ, Օսաքարեան վերնայ այն տեղէն կը պատայ. ասոնք ամենը դուն ոտք հանելիր. հիմայ ալ դնա Օսմանիկն պահակ որ հասկընաս։

— Իբրև դո՞ղ կամ Օսմանիէն պիտի ղրկէք, չէ նէ իբրև ժողովրդեան գրգռիչ։

— Ընդհա՞ռ դիտալնուդ բանը չէ, դուն բանտը պառկիլը մտմտա։ Շուտ ըրէ դուրս էլ։

Հետևեալ առտուն մեր Պետրոս եղբայրը իր ջահազանց Սահմանադրասիրութեանը հաւնոյն տեսչութեան դուռը գոցերու և մարդասպաններու յարկին մէջ քանտարկուած էր։

Մեր նպատակը միշտ այս տեղ պատմել էր նէ ալ ընթերցողաց հետաքրքրութիւնը յագեցնելու համար շարունակենք տակաւին։

Փաշազեան Տ. Յովհաննէսին ուղիղ սրտով ինդրած տերտողութեան ընդունելով մեյ մ՚ալ նայիս Պոլիս գըտնըվող ամեն Սուլթաններն ոտք կելնեն, լուսարարը ճանչող ամեն Պոլսեցիները գլուխ կը վերցընեն ու լուսարարին անմիջապէս բանտէն հանվիլը կը պահանջեն Պարբարբարանէն. միանգամայն և այնուհետև անոր եղած անպատուութեան փոխարինութիւն մը, եթէ անպարտ ելնէ լուսարարը՝ կատարեալ հարցափորձէ և արձար դատաստանէ մը ետքը։

Վարչութիւնը կը շուարի, Թաղական խորհուրդը կը չատախօսի. երկուքն ալ էս պատնալ կուզեն՝ չէն գրնար. վերջապէս ժողովուրդին մէջէն մէկը կ՚երթայ Տեսչութեան Դուռը երաշխաւոր կըլլայ լուսարարին և բանտէն հանել կուտայ այն անձը որ Ազգային Վարչութեան կողմէն ղրկըված էր։

Կրկնեմ որ լուսարարը բանտէն ելնելէն ետքը լինքը Թաղական խորհուրդէն և թէ Խառն ժողովէն աւելի կարօղ ըլլալու հիմնակորութեամբ ինքնիրեն կըսէ. «որովհետև այդ մարդիկը և այդ մարմինները բուն գողը փնտռելու և գտնելու տեղ անմեղն ու օրինապահը պատժելու եկան և որովհետև Ազգին իր տանը մէջ ունեցած յանցաւորը ինք պատժելու արտօնութիւնը ձեռքէ հանելու կաշխատին՝ ես ալ պիտի աշխատիմ որ նախ բուն գողը գտնել տամ, ապա ալ Տեսչութեան ձեռքով. որպէս զի տեսնեն և ուսնին մեր Հայերը թէ ինչպես քաղաքութեամբ հարցափորձ ընելու և ճարտարութեամբ փնտռելու գտնելու է գողը. Ր. պիտի աշխատիմ դարձեալ բուն գողին պատիժը Ազգային Վարչութեան մը ձեռքովը տալ տալու»։

Այս միտքով Տեսչութեան դուռը կատարելի կը ցուցնէ այս գողութեան համար եկեղեցիին մէջ պատահած ունեցող ամեն անձերը. արդէն ժամկոչները Տեսչութեան դուռը գնացին, այսօր կամ վաղը քահանաներն ալ պիտի երթան եղեր. — ես լուսարար Պետրոսին տեղն ըլլայի, Թաղական խորհուրդն ալ հոն բերել կուտայի։

Տեսչութեան դուռը այս կատարելութիւնը բուն բերվիլը և հարցափորձի դրվիլը խնդրելէն ետքը լուսարարը կ՚երթայ քահանին մէջ գտած հիւանդութիւնը գարմանել տալու և հիմայ հիւանդ պառկած է։

Ինչ տեղը անոր բարեկամները ոտքի եղած են՝ անոր եղած անպատուութեան փոխարինութիւնը պահանջելու։ Տեսնենք այս խաղին վերջը ուր պիտի երթայ։

ՀԱՑ ՎԱՆՔԵՐՈՒՆ ՆՈՐ ՀԱՀՈՒԵԿԱԼԸ

Կը լսենք թէ Պոլսեն շատ մը Հայեր, բարձրապատիւ Հիմէտ Վէֆիք Էֆենտիին Նիկոմիդիոյ մէջ տեսած արդար դատաստանները և մանաւանդ Հայ ազգին համար ցուցած բարի դգացումները լսելով բազմաթիւ ստորագրութեամբ աղերսագիր մը ղրկեր են իրեն սա օրինակով։

«Բարձրապատիւ Տէր.

Այն տեղէն ի վեր և այն տեղէն առաջ ալ, որ Կայսերական կառավարութիւնը թէ Ընտօլուի և թէ Ռումելիի ամեն նահանգները քննիչներ հանեց երկրին և ժողովրդոց վնասակար հասկընալու և բարեաքել տալու համար. մենք ալ կը փափաքինք որ քննիչներ հանենք մանաւանդ մեր ազգին կեանքը, անոր առաջնորդներուն վարմունքը և վանքերուն վիճակն ու եկեմուտքը հասկընալու և բարեաքելու ու կարգադրելու համար։ Բայց այս գործը ընելու ոչ արժանաւոր մարդ կը տեսնենք մեր մէջը և ոչ անոնց ձամբուծախքը հոգալու չափ ստակ կը գտնենք. ուստի և շատ ատեն կեցեր կ՚ըսպասենք որ մեծազօր Տէրութեան մեզի շնորհած Սահմանադրութիւնը գործադրվիլ սկսի, առաջներուն պէս հսկողութիւն ըլլըվի, և վանուց հոգաբարձութիւնը հաստատուի։ Տեսանք որ Սահմանադրութեան գործադրութիւնը ուշացաւ, մեր վանքերուն մէջ ալ գողերը շատցան. ուստի և ալ համբերելու ժամանակ չը մնալով կը խնդրենք ձեր վեհմութենէն որ անցած գաւառներուն մէջ գըտնըված Հայոց վանքերուն ալ հաշիւը քննելու ձանձրութիւնը

յանձն առնէ. մատակարարութիւնը բանիւ բուն մարդոց յանձնեցէք, ոչնչէ և անպիտան մարդիկը թէև երկինքէն լքած հրեշտակ ալ հրաւիրված ըլլան, գործ ըրէք և անոնց առջ ձշմարտապէս բարի և առուգիս ազգասէր անձինք գրէք։

Կարձրատուիս Տէր. կ'աղաչենք որ զանց չընէք մեր այս խնդրանաց կատարումը և գէթ Նիկոմիդիայի նահանգէն չելած Ըրմաշէն վանքին հաշիւները քննէք հասկընաք և լմնցընէք Հայ ազգին թէ ինչպես կ'ըլլայ որ այդ Հայ ազգին մէկ գանձատունն եղած վանքը այնչափ տարիներէ ՚ի վեր այնչափ հարստութիւն կրնկլէն եաքը, այսօր ինքը զինքը շինելու համար նորէն մուրալու կը կարօտի։

Կը խնդրենք Վսեմափառ Տէր, ասոր վրայ Հայ ազգին միաքը հանդարտեցընող դաղափար մը տաք։

(Աղտագրութիւն)

Ամեն Թաղ հրահանգներ ղրկուեր է 75 ղուրուշ տալու կարող քահէտուներ պատրաստելու համար։ Մեր լսածին նայելով՝ շատ Թաղերու մէջ արուեստ կայ եղեր այն հրահանգներուն մէջ [illegible] խօսքեր գտնուելովը։ Մենք ազ հրահանգները տեսած և կարդացած չըլլալնուս համար ուրիշ տեղի կը թողունք խօսիլ անոր մէջի մուրի խօսքերուն վրայով. բայց դալով 75 ղուրուշ տալով քահէտու ըլլալուն՝ կրսենք որ տալ Սահմանադրութեան անժխտելի հրամանն է, և հարկ պէտք է գործադրուի անվրէպ։ Սակայն կը պարտաւորինք հարցունել Թէ այն 75 ղուրուշը ինչ պայմանաւ և ինչ անօրէնութեամբ պիտի հաւքուի. քանի մը 75 ղուրուշ տալու կարողութիւն ունեցողներն ալ դարձեալ տասիճաններ ունի. Թող նայն գումարը տալու կարողութիւն չունեցողներուն մէջ կարելի է կարողութիւն ունեցողներէն աւելի ընտրողական լաւ ձանաչում ունեցող անձեր կը գտուին. օրինակի համար՝ մարդ կայ որ 75 ղուրուշը այսօր կրնայ տալ մարդ ալ կայ որ՝ Թէև նոյն րոպէին չը կրնար տալ, բայց երկու կամ երեք շաբաթէն կրնայ տալ. և կը գտնուին այնպիսիներ ալ որ՝ կէսը նոյն ժամուն կրնան տալ և կէսն ալ մէկ ամիսէն, տասնց ամէնն ալ տալու կարողութիւն ունեցող կը համարուին։ Ո՞նչպէս պիտի ըլլայ. նոյն օրը կամ նոյն շաբթուն ամէնը մէկէն չկրնալ տալերնուն համար պիտի ղրկուին այն անձինքը այնպիսի մեծ արուեստ նաւթենէ մը. . . .

Թէև մենք կը յուսանք որ Ազգասէր և Սահմանադրասէր Հայեր ամէն նեղութեան պիտով յանձնառու ըլլալով պիտի ջանան 75 ղուրուշը ինչ և իցէ կերպով ճարել և տալ. սակայն և այնպէս Ազգին կողմէն հարկ է արդար և դիւրամատչելի անօրէնութիւն մը ընել, որպէս զի կարող ըլլայ վերջապէս 75 ղուրուշը տալ մէկ տարուան համար։

Այս մեղ՝ եթէ նոյն դարձին հատուցումը իրատացի և արդար պայմաններու հետ կապել, անշուշտ շատ անձինք իւրաքանչիւր Ազգին՝ իբրև Ազգային անդամ քահէ մը, կամ ձայն մը ունենալու համար 75 ղուրուշը աչքերնուն մեծ բան մը պիտի չերեւնայ։ Բանդի շատեր կան, որ կամ տարին 75 ղուրուշ տալու կարող չեն համարուիր, և կամ իրենք ինքզինքնին անկարող կը սեպեն, բայց եթէ անգամ մը հաշուի առնեն այն պիտիները իրենց մէկ տարուան մէջ ունեցած մսխած տուակնուն խաչոր գումարը, պիտի տեսնեն որ՝ ոչ Թէ 75 ղուրուշ տալու անկարող են, այլ քանի 75 տալու ալ կարող են. . . .

[illegible]

Իրիկուընէ մնացած եւանդուն արեւմէ մէկ քանի Հայ պարոններ առտու մը կանուխ գալենոյի մը մէկ մուտի անկիւնը նստած երբ ուրախ ղուարթ օդնի գաւաթները ձեռքերնին կեցցէներու շշնկոց մը հանելու վրայ էին, յանկարծ՝ բարի լոյս ձեղ ըսելով՝ երկայնահասակ և ճաղատ ճակատով վաւելուչն երիտասարդ մը առջևնին կը տնկուի, կը մնայ։

Ցիշեալ պարոնները՝ մէկէն ոտքի վրայ ելլելով՝ կեցցէ, կեցէ, կացէ, կեռաս, կեռ (գուցէ օդնին գաւաթը, կամ ուղեղին պարկը) զնեծ, վիվա և եալչի աղաղակներով արձագանք կուտան։

Ո՞նչ կընէք. կուրախանա՞ք. այսօր ղուարթեան օր է ձեղի համար. . . .

Կեցցէ, կեռաս, կեց. . . հրամմեցէք։

Ո՞նչ կայ, ինչ ունիք այսօր. երեկ բա. . .

Կեցցէ, կէս. . . օդի մը կը տնկէ՞ք. ան նայինք. կեցցէ Ազգ և Սահմանադրութիւն։ Ամենն ալ իրարու հետէ զանազան լեզուով կեցցէներու շանթ մ'ալ կը տեղան Պարօնին գլխուն։

(Ո-ւիշ ըը) Տէ, տնկէ նայինք սա օդնին. էհ, կեցցէ. . .։

Պարոնայք, լակ կեցցենեցուկ, և ջոր վիճա-
նեցուկ դարձ չմնանաք. Աղբանիրսեթիւնը կեցցէ
աղաղակներէն կախում չունի. Երեկուան ան-
բախտութիւնը և կեցցեները բաւական եմն,
քիչ մ'ալ գործադրական կերպով աշխատինք.
և Աղեին ցաւալի վիճակը բարեկարգուելու
միջոցները խորհինք: Աղեին սրտին խորը թա-
փանցինք, և տեսանք թէ ինչ ցաւալի և
ազեխորով խորհուրդներ մէջերնուած կան. ըլ
կեցցենաբեզ առանց դարման չեն կրնար ըլլալ:

Ո՛հ, օր ըսա՜ւ ցաւալի լուրերը մեր
սրտերը վիրաւորելէն և տաչտեցնելէն չեն դադ-
րիր. և . . .:

Կեցցէ, կեցցէ . . . երեկ Հանդէսին դուք
ալ ներկայ եղիք. եալասն . . . ամէ, մէյմէկ օգի
ալ անկինք: կենդանութիւն, զիլմա՜, վիվա՜:

Պարոններ, ան կեցցենեցուն հարիւր հա-
զարը մէկտեղ բերելու ըլլանք նէ, մեր արդի
ազեկեզ ցաւին դարման մը չեն կրնար ըլլալ:

Կը ցաւիմ և կը զարմանամ որ այսպիսի
սրտակսկիծ լուրերը լսելնիդ եաթը՝ տակաւին
սիրտ ունիք ուրախանալու, և գլուխ՝ խնդա-
լու. հիմա խնդալու տաեն չէ, եղեք, եր-
թանք քիչ մը ուրիշ բան խորհինք . . .:

Կեցցե՜ . էյ, Պարոն . օգի մը կը տնկեա՜ . տն
նայինք . կեսաե՜ . շատ խօսք պէտք չէ . (Ռէ
ո՜ւիլ մը) Տար շատ հօսելու տեղ չէ, հմմեք,
կեսաե՜ . ամէ . համ . դուն ալ մեզի հետ հնտա
ուրախացիր . (ամէնը Ռիլէն) . կեցցե՜ . կեսաե՜ .
զիլմա՜, վիվա՜ . . . :

Խեղճը պարտատէրը կասկածոտ անոնց
սրտերուն մէջ Աղգային Ճշմարիտ զգայմունք
զարթուցանել. և վերջապէս յուսահատուիլ
անոնցմէ կը բաժնուի. և ուրիշ ցաւերով
ծանրաբեռնուելու կերթայ Ճշմարիտ Աղգասէր-
ներ փնտռելու . . . :

Մեր հրատարակած "Ակարագիր ազգային Ու-
րուագրի" մասիցը գրչին վրայ դիտ-
ողութիւնը՝ համար ունինք բարեացակամ
յարգանօք պատասխանել հետեւեալ
պատասխանը:

. . . "Եւ որովհետեւ (բարեկամք իմ)
"անպատեհութիւն չունէն ասկա յայտ
"նելնիս իմ ընկերասիրութիւնն, ասկոն
"և զայրալիսի զրպարտ զիս վատ
"ասկս և բարեմտ աչխատասիրութեամբ
"զանոնք վատ վաճառականութեամբ
"ընդ Թէմիս ընկեր տալ ուշ կարծեր
(Վազ. Փարպ. Հնուղի Բողբոջ):

Յայտնի է արդէն հասարակութեան, որ
մեր հրատարակած "Ակարագիր ազգային Ու-
րուագրի" մասիցը կերպով մը
Թերզուզայ շահերուն հետապրրուրութիւնը
շարժեց ալ նէ՝ բայց ամենուն ներկին ջիղերուն և
ուղեղներուն դպչելուն համար՝ ահաւոր ամպրո-
պիլ. և ամենք նորա մէջը նշմարակուած ան-
ուրացանալի և յայտնապէս ճշմարտութիւնները
և իրողութիւնները կասկածելի և անվաւերա-
ցուցնել. և ամենք ալ մէջէն իրր թէ սխալ
կամ սուտ և զրպարտական բաներ նշմարելով
անհիմն և անտեղի հրատարակել. սրով և
գիրքը կասկածելի ու զմեզ խարդախ ցուցը-
նելով Ս. Երուսաղէմի հանգուցեալ պատ-
րիարքը անարատ եղևցնել. ինչպէս որ արդէն
գուշակած ըլլալով զանոնք՝ գրքին ձակատը
պատուի մը իմացուցեր եմինք. տեսեր. ե. Ցիշ
եալ անձանցմէ մէկին էր, Իւթիւճեան Կարա-
պետ Սահակ անուն լծկպրին խմբագիրը, և
միւսն էր՝ Սէր անուն հանդիսին մէջի հրա-
տարակուած յօդուածին անտառուն հեղինակը:

Ուսուցինք իր բնական ծաղրաբանութեամբ
բը՝ կամ լաւ ևս ջարդախուճապով՝ շահախնդիր
բութեան ոգւով՝ գրքին տակագիրը էրեն ջիղի գըր-
ուածոյը համոյն չէ՝ ըսելով՝ մեր վար քաշելու-
ուեղ՝ իրեն տժանի ծանր նախատանքն և
անմարդավարել խօսքերով . . . և կուզէր որ
"ազէ տիպ Ուրուագրի" ըսուելու տեղ՝ նոր
Նաբօ-Գոդոնոսոր մը էրևան էլնելով բնդրովին էրջա-
նէր ու քանջինջ ընէր Ուրուագրի ըսուելը, որ ինքն
ալ գոնէ քիչ մը հաւատայր և սիրտը հանդչէր.
Աղեխ ու Միսթանից վրայ եկած և եղած
ազէտալի հարուածները տեսնելով: Այս ազ
գասեաց՝ անձին ըրած բարբանջմանցը դէմ
արտասիան մը չունինք տալ՝ որ իրեն չնմա-
նինք. քանզի մէկ մը՝ ինքնին իր գրուա-
ծովը խայտառակ եղաւ. և մէկ մ'ալ որ՝ ար-
դէն քանի մը ազգասէր անձինք զինքը անպա-
տասխանի ընկին հրատարակական Թերթերու
միջոցաւ, տես Ակճաւոյի, Թիւ 425, 429:
Ա և Նապի Թիւ 108: Սէր Թիւ 16: Ուրուագրը
որ էր Սէր անուն հանդիսին միջոցաւ հրա-
տարակուած քննադատական յօդուածը, որն
որ Ակնոց պարոկ մը հասու՜ն վերնագրով ըս-
կսած էր. որուն մէջ հեղինակը կերտակերը
որ ձեռ բռնականո՜ւթ՜ն չունենալէն խոսովանէր եմ
եղեր . . . (լռութիւնս նայելով՝ որուն հեղի-
նակը յաւուրս Հոռովմէականի կղերը մը ըլլալուն՝
գուցէ մեղմ իր խոստովանութիւնները մէկը
համարելով երևակայած պիտի ըլլայ, եթէ ոչ
մենք դէրին մէջը ատանկ բան մը խոստով-
նած չեմք . . .) և կամ թէ գրչին ջիղի նշանա-

Ի՞նչ պէտք էր որ ըսէր Աղդն ու Սուրբ Յակոբոս միաբանութիւնը՝ որ ժամանակ չունենալով յիշեալ գրքին մէջի պատուհասուած ձիշտ ժողովութիւններըը եթէ կարելի է հերքուի. որ յետ ժամանակաց ատոր և ժամանակակից պատմութեանց կարգը չանցնի, և այլն։ Ուստի ալ ատանկ ըսել և հրատարակել կը վայելէր, բառարտմ մէկ մը որ մեռնէ չէր անոր հեղինակը՝ քանզի բան առածին "պատահել գիտէ սխմարն ի տան իւրում", քան խմաստունն ի տան պալ»։ և մէկ մ'ալ որ Ս. Փրկչի Հանգանացը կը ապացուէր յիշեալ հանդէսը՝ վասնորոյ հաւանականապես կըսենք թէ՝ երբեմն Ս. Երուսաղէմայ և ապա Ս. Փրկչի հաւերը ուտող պապո-ելլին խնդրանքը ու թելադրութեամբը գրուած ու հրատարակուած պիտի ըլլայ յիշեալ ափեղցլիեղ յօդուածը, քանզի յիշեալ անձը նոյն միջոցներուն գործակալութեան պաշտօն կը վարէր Հիւանդանոցին։ ։ ։ Ու երրորդ՝ վերջապէս լսելով այս օրինակ կարգին գնելով՝ երկու տարիէն ետքը յիշեալ գրքին մէջի նշանակուած կամ խոստովանութեան ենթակայ եղած անձինքը թեև թեւի տալով իրենց հաշիւնուր և երեւելի ու խելացի և աստուածապան ու խմաստուն և զօրաւոր վիճաբանի մը գտան այսօր մեր գիրքը գոնուքննելով հերքելու, և Երուսաղէմայ հանգուցեալ պատրիարքը ու նոյնպէս ցուցնելու։ և յիշեալ վիճաբանին մէջ բերած հմպելը ու զօրաւոր ապացոյցներովը, գրքին մէջի նշանակուած իրողութիւնները իրր ուռա և սխտեղի ու կասկածելի ցուցնելու, և որով զինեալ իրր տգետ և խաբեբա ու սխալական անձ մը ցուցնելու աշխատեցան, և մինչև յանխեռան ալ պիտի աշխատին անշուշտ։ ։ ։ վերջապէս քանի ամիսե ի վեր աշխատելով և վեր վար դարձնելով ու ապտէն մէկ տողերը խոշորացոյցով նայելով և շատ մըն ալ բարի ալիւրին մաղերէն անցնելով իրենց խելքովը ոչ յիշեալ վիճաբանին՝ այսինքն Ջամուճեան Յօհաննէսի պէս անձին գլխովը հեռանալ երեք հատ իրր պատ ու անդէն և գրէ՞ք գիրը պատարիարքը ամբաստանեցնելու գնան, երեք հատուածի բաժնելով (որոնք քիչ մը վարերը պիտի տեսնուին) միանգամայն թէ մեր և թէ ուրիշներուն անձնական պատուոյն ալ դպչելով, որն որ իրաւունք մը չունեցողին ձեռքը իրր թէ մատ մըն է որ ուզածին պէս սրսէ որ ուզէ նէ կը քսէ, և ամո՞ մըն է՝ որու որ ուզէ նէ կը նեղէ։ ։ ։ և յայտնի է որ յիշեալ Ջամուճեան ալ իր մտքանուանքը համեմատ ատանկ բաներու մէջ միր և յաջողակ է։ ։ ։ նախ նաեւանք պարտաւորեալ է ընելու, որովհետեւ իրեն ներփն քիչերո՞ն դպչելէ իրողութիւնը ալ կան յիշեալ գրքին մէջ։ Ուզղ թեպետ և մենք ոչհամարհատ ըլուծեմք մը պիտի անցնէինք ալ նէ՝ ակնածելով իրեն զաւամութեանը, բայց և այնպէս չըլլայ որ իր գրած գնորդականութիւններուն ինք անցնելէն հաւքը հաւատացողներ գտնուին, և կամ մենք ալ իրր թէ անպատասխանի եղած գտնուինք։ վասնորոյ քանի մը խօսք ընուցել հարկ եղաւ։ Ու ըստորում Յօհաննէս Պրուսացի Տ. Կատրպետեանը միւս շահատեր ոգեհոներուն նման միայն անբաւականութեամբ ափեղցը փեղ խօսքերով և կամ միայն անձնական պատուոյ դպչելով և կամ թէ նախանձով մը վերայր քաշկըռտելով առանց գատաքննութիւն մը ընելու հերքած չէ մեր գիրքը։ և որքան որ այդ կերպերը բանեցուցած ալ է նէ՝ գատաքննական ոճ մը բռնելով իր գիտցածին կամ իր խելքին հասածին չափ մէջէն իրր թէ սխալ ու անտեղի, կամ ինչպես ինքը կըսէ առելութեան և ոխակալութեան իրեր նշմարած է, որով մեզ ալ կասկածելի և խարդախ անձ մը կուզէ և կաշխատի ձեւացնել։ Այդ ուրեմն և մենք ալ ակամայ կը պարտաւորինք իր ըրած չիմարաիան շաղփաղփութիւնները և իրեն ինչ ոգւոյ տեր ըլլալն ու իրեն գիտցած ու գրած գատաքննութիւնը ինչ արժէք ունենալն ալ մի առ մի յայտնել։ և այս ալ այնու գիտաւորութեամբ որ՝ եթէ իրեն խելքին ու գրաւածոյը ուշադրութիւն ընող և իր ըսածներուն հաւատք ընծայող՝ և իր հրատարակական թերթերը մեր Հայ ազգին ընթերցող անձինք կան ու անով գոյնակցութիւն մը պատճառած է նէ իրենց, գուցէ ներկայ գրութեամբս կը փարատի իրենց գոյթակտած միտքերը, որով և հաւատք կընծայեն մեր գրութեանց։ ապա թէ ոչ՝ եթէ Ջամուճեանին ամէն մէկ խօսածին ու գրածին ականջ գնելու որ ըլլանք՝ նախ հատատակութեան և ընթերցողաց ձանձրութիւն կուտանք։ և երկրորդ՝ մենք ալ իրեն գաղափարէն և իրեն խելքէն եղած կըլլանք՝ յորմէ փրկեսցէ զմեզ Ամուսած ազաչեմք։ ։ ։ ։ Ահա այսքանը իրր յառաջաբան հասկցնելէն ու հասկցուելէն ետքը գանք հիմայ Ջամուճեան Յօհաննէսին մեղն ու մեր գրքին դէմ գրած տողերը մի առ մի մէջ բերելով՝ մեր կողմէն խօսելիքնիս առ ընթերը գնել։

Շ. Ա.

Մասիսի 590 թուէն մէջ Ազգային Ձանդեսին նկատմամբ հրատարակուած յօդուածին վերջին մասին դէմ Պէյքօզ օգափոխութեան գացող Ըրդոյ անձի մը կողմէն քաղաք մը եկած ըլլալով՝ այս անգամ տեղ չունենալը նուա համար յաջորդ թուով պիտի հրատարակենք։

— Դարձեալ Մասիսի նոյն թուէն մէջ ի դիմաց Բահանայական ժողովին Տ. Յովհաննէս Փափազեանի առարգրութեամբ Պեղուի դէմ այն ամբաստանութիւնը մը կարդացինք, որ այս շաբթու խնդալէն դլուխ գերելու առեն պիտի չունենանք. ուստի անոր պատասխանը յաջորդ թուով պիտի տանք։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ԳԵՐԵԶՄԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

ԿԱՄ

ՏՈՓԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

ԵՒՐՈՊՈՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ ԱՐԴԻ ԴՐՈՒԹԵԱՆ

ՀԱՄԵՄԱՏ

ՏՊԵԱԼ Ի ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

Մօտ 38 երեսէ բաղկացեալ տետրակ մի է, որուն պարունակութիւնը արդարև խիստ կարեւոր է գիտնալ ամէն պատանեաց, և լաւ այնմ չարժիլ ու զգուշանալ։ ։ ։ Մենք այս նիւթին վրայ դուցէ ուրիշ առեն երկարօրէն խօսելու առիթ պիտի ունենանք. բայց առ այժմ միայն սա կըսենք, որ այս տետրակին 5 զուրուշ տուողը և չառնողը պատանեաց և երիտասարդաց իրօք գերեզման է. իսկ այն որ 5 զուրուշը կուտայ և կառնէ, ու անոր տուած դուրսգրութեանը հաւատոյս կը չարժի, իր մտատոչ հաստատին մէջ մարդկութեան հիմը պաշտպանած և գերեզմանին եղկելները փրչեցուցած կըլլայ։

Ըմէն Հայ գրավաճառաց քով կը ծախուի։

Պատը քեօխ մօտ Ամիրհրատար պաղը կոչուած համբառատուր տեղին իրաւէն Ն. Դունէն եկած ըլլալով սկսուած է ծախուիլ, ինչ և իցէ չենք մը նոյն օդուտը և զուարթարար տեղին վրայ կառուցանել ուզողը կրնայ ուզածին չափ տեղ ծախու առնել։ պէտք է գիտնալ որ ո՛և իցէ ապրե եղող անձի վրայ կրնայ դառնալ։

Ուզողը կրնայ յիշեալ տեղը երթալ գալե նօձի Պ. Պօղոսէն գինը իմանալ և անոր հետ սակարկութիւն ընել, հոգ չէ որչափ ալ քիչ տեղ առնելու կամք ընէ։

ԸՐԻՕՐ ԵՂԲԱՅՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶՈՒԱՐԹԱԼԻ

ԵՒ

ԱՌԱԿԱԽԱՌՆ

Այս զուարճալից ծառայով զուարթախառն պատմութիւն մըն է, և բան գործ չունեցողները էնկէփէրթել կընէ։

Կը ծախուի Մարգարեան Պ. Յարութիւնի խանութը, և Մեծ նոր խանը Հանգիստ սենեակը. Մահմուտ բաշա Քիւրքճիւ խանի դէմ Յակոբ Փափազեանի գրատունը։

Գինն 6 զուրուշ

ԼՐԱՏԸ

ԱՐԾՈՒԻԿ ՏԱՐՕՆՈՑ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՑ

Ըրժանապատիւ Խրիմեան Ամրոխչ վարդապետի հակողութեան տակ այս անուանեալ Կիսամեայ Հանդէս մը սկսած է հրատարակուիլ Պոլս Ս. Կարապետի վանուց մէջ, ուրուն առաջին Թիւը տեսած ենք։

Այ Հանդէսին նպատակն է Հայաստանի վերայով զանազան լուրերը հաղորդել. Տարօրնոյ բնակչաց բարեկարգութեանն ու մտաւոր զարգացմանը հոգ տանիլ ևն ևն ևն։

Ամենք ի բոլոր սրտե երկար կեանս կը բաղձանք այս Հանդէսին համար և կը փափաքինք որ ժամ յառաջ կարող ըլլայ իւր նպատակին հասնելու ի յօգուտ խեղճ և հալրբաստահարեալ Հայաստանցւոց։

Այսր տարեկան գինն է 24 զրչ.
Վեցամեայ » 12 »
Մէկ հատը 40 փարայ

Պօլսոյ մէջ Հանդէսիս գործակալն է Տ. Գևոնդ վարդապետ միաբան Վարագայ, քաղուիչ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն Գալաթիոյ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ